ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 ապրիլի 2020թ. թիվ 371-Ա

«ՈՒՌՈՒՏԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՊՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ
ՄՐՑՈՒՅԹ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ Լոռու մարզպետի 2011թ. դեկտեմբերի 22-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանի ենթակայության տակ գտնվող պետական ոչ առևտրային կազմակերպությունների և հարյուր տոկոս՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող առողջապահական բաժնետիրական ընկերության գործադիր մարմնի ընտրության (նշանակման) մրցույթի կարգը հաստատելու մասին» թիվ 440-Ն որոշմամբ և հաշվի առնելով ՀՀ Լոռու մարզպետի 2020 թվականի փետրվարի 1-ի թիվ 157-Ա որոշման հիման վրա համակարգչում նախօրոք զետեղված և համակարգչի կողմից պատահական ընտրված 7 թեկնածուների ցուցակը՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանի ենթակայության տակ գտնվող հարյուր տոկոս՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող «Ուռուտի առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի թափուր պաշտոնն զբաղեցնելու համար 28.04.2020թ. ժամը 11.00-ին մրցույթ անցկացնող մրցութային հանձնաժողովի կազմը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված հանձնաժողովի անդամներից հանձնաժողովի նախագահ նշանակել Արթուր Մխիթարյանին, հանձնաժողովի քարտուղար՝ Լուսինե Վարդանյանին:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Invalid signature

X

ԱՆԴՐԵՅ ՂՈՒԿԱՍՅԱՆ

Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆ

2020թ. ապրիլի 27
ք.Վանաձոր

Հավելված.
ՀՀ Լոռու մարզպետի
2020թ. ապրիլի 27-ի
թիվ 371-Ա որոշման

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանի ենթակայության տակ գտնվող հարյուր տոկոս՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող «Ուռուտի առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի թափուր պաշտոնն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնող մրցութային հանձնաժողովի

կ ա զ մ

Արթուր Մխիթարյան	- ՀՀ Լոռու մարզպետարանի գլխավոր քարտուղար
Հարություն Այվազյան	- ՀՀ Լոռու մարզպետի խորհրդական
Սամվել Մակարյան	- մարզպետարանի քարտուղարության պետ
Ռաֆայել Հարությունյան	- մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ
Լուսինե Վարդանյան	- մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության առողջապահության բաժնի պետ
Նունիկ Ասրյան	- մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ
Ժիրայր Ղազարյան	- մարզպետարանի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության ՏԻ և ՀԾ հարցերի բաժնի պետ

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

04/27/20

X

ԱՐԹՈՒՐ ՄԽԻԹԱՐՅԱՆ

Ա.ՄԽԻԹԱՐՅԱՆ